



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
<i>ԵջրոՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ</i> ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԲՍԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մարիամ Գևորգյան

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան*

Սույն հոդվածում անդրադարձ է արվում նախաձանցային համակարգերի զուգադրական վերլուծությանը ժամանակակից, իտալերենում, հայերենում և անգլերենում՝ հենվելով ձևիմաստային, իմաստաբանական, բառակազմական հատկանիշների վրա: Մասնավորապես քննությունը տարվում է ձևիմաստային տիպաբանության, զուգադրական վերլուծության շրջանակներում: Նշյալ տեսությունների համատեքստում հաշվի են առնվում երեք լեզուների առանձնահատկությունները:

Բանալի բառեր. *բառակազմություն, նախաձանցում, վերջաձանցում, ձևիմաստային, իմաստաբանական հատկանիշ:*

Ներածություն

Կենդանի լեզուն ճկուն, շարունակ փոփոխվող և զարգացող համակարգ է, և խոսակցական պահանջմունքները բավարարելու համար լեզուն շարունակաբար հարստանում է նոր բառերով, մինչդեռ քիչ գործածականները դուրս են մղվում լեզվից: Լեզվական առանձնահատկություններից մեկն էլ բառային կազմի՝ նոր միավորներով համալրումն է, որն իրագործվում է նորաբանությունների հաշվին: Բացի նորաբանություններից, գրական լեզուն հարստանում է նաև օտար լեզուներից կատարվող փոխառությունների միջոցով: Լեզվի հարստացման գործում, սակայն, առավել մեծ տեղ ունի նոր բառերի ստեղծումը՝ բառակազմական տարբեր միջոցների շնորհիվ: Հայերենում և իտալերենում առկա է բառակազմության երեք եղանակ՝ ածանցում, բառաբարդում և հապավում (Եզեկյան 2005:182), (Moretti 1996:36): Մինչդեռ անգլերենում նոր բառը կազմվում է ածանցման, բառաբարդման, և փոխակարգման միջոցով (Ginzburg 1979:109):

Ածանցների դասակարգումը

Ածանցումը որպես բառակազմական հնագույն եղանակ մեծ դեր ունի լեզվի բառապաշարի հարստացման գործում: Ըստ Մ. Աբեդյանի՝ ածանցները հիմնականում բաժանվում են երկու մեծ խմբի՝ նախաձանցներ և վերջաձանցներ կամ ինչպես հեղինակն է նշում «աննշան մասնիկներ» (Աբեդյան 1965:222): Պատմական ակնարկից հասկանալի է դառնում, որ մինչև հունական դպրոցի հայտնվելը հայոց լեզուն բացի ժխտականներից ուրիշ նախաձանցներ չի ունեցել: Մի խումբ ածանցներ առաջացել են երկու ածանցների միացումից, երբ ստացել

են նոր իմաստ և ըմբռնվել իբրև մեկ ածանց (օրինակ *անակ* ածանցը առաջացել է *ան* և *ակ* ածանցների միացումից – *գսպանակ*, *մրցանակ*, *շրջանակ* և այլն): Հայերենի ածանցների առաջացման մյուս հիմնական աղբյուրը քերականական ձևայիններն են՝ գրաբարի հոլովման և խոնարհման, հոգնակիի կազմության ձևերը: Վառ օրինակ է գրաբարի *ք* հոգնակերտ մասնիկը, որը ժամանակակից հայերենում ընդունվում է որպես ածանց, ինպես օրինակ *գիրք*, *հայրենիք*, *վազք* (Եզեկյան 2005:194):

Հայերենում կան ածանցներ, որոնք լեզվի մեջ ներթափանցել են փոխառության միջոցով, ինչպիսիք են օրինակ պարսկերենց փոխառյալ *-ուհի* և *դժ-* ածանցները, ռուսերենից *-իզմ*, *-իստ*, *-իա*, *-ցիա*, հունարենից՝ *-ություն*, *-ուհի*, *-ցի* և այլն: Եթե հայերենում ածանցների փոխառությունը հազվադեպ երևույթ է, ապա ժամանակակից իտալերենում նախաձանցների զգալի մասը լատինական կամ հունական ծագում ունի, միայն *mis-* (misconoscere) և *sur-* (surreale) ածանցներն են ֆրանսիական ծագման (Sensini 2012:570):

Ածանցները, որպես բառակազմական ձևայիններ, ունեն բազմազան դրսևորումներ:

Ուշադրության են արժանի հատկապես հետևյալ հատկանիշները՝

- ձևաբանական-հնչյունական կառուցվածքի,
- խոսքիմասային պատկանելիության
- իմաստագործառական
- բառի կազմում զբաղեցրած իրենց դիրքի ու հերթագայության,
- կենսունակության ու գործածության հաճախականության,
- ծագումնաբանության

Ածանցների հիմնական դասակարգումը կատարվում է ըստ **ձևաբանական** հատկանիշի, այսինքն, թե տվյալ ածանցով ինչ խոսքի մասեր են կազմվում: Ըստ այդմ դրանք բաժանվում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, թվականակերտ, բայակազմական ածանցների (Եզեկյան 2005:184): Գոյականակերտ ածանցները, դրվելով տարբեր բայերի հիմքի վրա, կազմում են գոյականներ: Ի տարբերություն վերջաձանցների, ժամանակակից հայերենում և իտալերենում նախաձանցներ ավելացնելիս գոյականը պահպանում է գոյականի իր իմաստը, ածականը մնում է որպես ածական, իսկ բայը՝ բայ. այսինքն խոսքիմասային փոփոխություն չի դիտվում՝ (*արքա-փոխարքա*, *onore-disonore*, *գոհ-ըձգոհ*, *sociale antisociale*, *անել-չանել*, *fare-disfare*): Անգլերենում միշտ չէ, որ լեզվակայն այս երևույթը, նշած դրսևորումներն ունի. նախաձանցի ավելացումը բառի արմատին էական դեր չի խաղում վերջինիս խոսքիմասային դասակարգման հարցում:

Ստորև ներկայացված են առավել կենսունակ գոյականակերտ ածանցները ժամանակակից հայերենում, իտալերենում և անգլերենում՝

Գոյականակերտ նախածանցներ	Prefissi Nominali	Noun- Prefixes
<p>անդր- անդրաշխարհ առ-առօրյա արտ(ա)-արտերկիր, արտասահման բաց-բացակա դեր-դերանուն ենթա-ենթաշրջան հակ-հակասություն մակ-մակերես պարա-պարագիծ ստոր-ստորադաս տրամա-տրամագիծ փոխ(փոխարքա, փոխնախագահ)</p>	<p>a-afono, an-anarchia ante-anti-anteguerra, anticamera circo-, circum-, circun- circoscritto con-, com-, col-, cor-, co- conoscio, comprimario, correligionario, coabaitazione</p> <p>contr-, contra-, contro-, contrattacco, controvento, controfigura</p> <p>de-, di-degradazione, dispiacere</p> <p>dia-diaspora dis (dal Latino, indica negazione o separazione)-disamore dis (dal Greco, indica alterazione o malformazione)-disfunzione epi-, epicentro eu-eufemismo fra-, infra-, infrastruttura in-, im-, ill-, ir-, i- incapace, ignoto inter-, intermezzo intro-, introduzione iper-, ipertensione ipo-, ipotensione meta-, metalingua mis-, misfatto per-, perfetto peri-, periscopio pre-, preconoscenza pro-, proiettore s-, sfiducia sopra-,sovra-, sovr-, sopraciglio, sovrappieno sub-, subacqueo super-, superuomo tras-, trasfusione</p>	<p>an-anarchy ante-anti-antiwar arch-archenemy audio-audiorecording auto-autobiography bi-bicycle bibli-biblio-bibliography cat, cata, cath-category, catalogue circum-circumference cor-correlation den-dentist dia-diameter eco-ecology equa-equi-equator ge-geo-geology hemi-hemisphere in-inaction mal-malfunction micr-micro-microscope non-nonsense para-paralegal phot-photo-photography retro-retrospect syn-sym-symphaty tele-tel-telephone tri-tripod util-utility</p>

Ածականակերտ ածանցներ

Անրադառնալով ածականակերտ ածանցներին՝ հարկ է նշել որ, դրանք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են ածականներ:

Ածականակերտ ածանցներ	Prefissi Aggettivali	Adjective-Prefixes
ամենա- ամենամեծ, ան- անկիրթ ապ(ա)- ապուշ, ապարդյուն բաց(ա)- բացահայտ, բացորոշ գեր(ա)- գերկարճ, գերակշիռ դժ- դժգոհ ընդ- ընդհանուր հակ(ա)- հակամարտ, հակադարձ, հակամետ համ(ա)- համահունչ, համադաս, համարժեք հար(ա)- հարակից, հարադիր, հարաբարդ ստոր(ա)- ստորադաս, ստորերկրյա չ- չտես վեր(ա)- վերահաս, վերջրյա, վերամբարձ տ- տգետ տար(ա)- տարատեսակ, տարազնաց, տարօրինակ:	a-, an-, analfabeta ab-abnorme anti-antiaereo circo-circoscritto com-comprimario dia-diacronico extra-extraterrestre in-, il-, ir-, i-, incapace, illiberale, irrepitibile, ignoto intra-intramuscolare iper-iperattivo mis-miscredente ultra-ultravioletto per-perfetto sub-subnormale super-superaffollato sur-surreale trans-transalpino	a-,an-, apolitical ab-abnormal ambi-ambidextrous ante-anterior auto-automotive cog-cognate cosmo-cosmopolitan dia-diagonal extra-extraordinary hetero-heterosexual homo-homogeneous hydr-, hydro-hydroelectric hyper-hyperactive il-illegible inter-international mono-monolingual omni-omnivororous pan-pandemic quadr-quadrilateral semi-semiannual sub-submarine un-unceasing uni-uniform

Աղյուսակում ներկայացված են առավել գործածական գոյականակերտ և ածականակերտ ածանցները: Ինչպես կարելի է տեսնել, գոյականակերտ և ածականակերտ իմաստային տարբերակմամբ առանձնացնում ենք ածանցների հետևյալ խմբերը իտալերենում, անգլերենում և հայերենում՝

- Տարածա-ժամանակային նախորդելիություն ցույց տվող նախածանցներ՝ **avan(ti)-avantielenco**, **ante-anteprema**, **anti-antipasto**, **pre-precampionato**, **ante-anterior**, **նախա-**նախածանց, **ենթա-**ենթաշրջան
- Հաջորդականություն ցույց տվող նախածանցներ՝ **post-postvocalico**, **retro-retroattivo**

- Ժխտում ցույց տվող նախածանցներ՝ **a**-amorale, **dis**-disfunzione, **in**-incapace, **non**-non credente, **s**-sfiducia, **senza**-senzapatRIA, **non**-nonsense, **dis**-dissatisfaction, **un**-unfamiliar, **ան**-անկիրթ, **դժ**-դժգոհ, **չ**-չտես, **տ**-տզես
- Շրջում ցույց տվող նախածանցներ՝ **circum**-circumnavigazione, **anti**-antiprostilo, **peri**-perielio, **circum**-circumference
- Միասնություն ցույց տվող նախածանցներ՝ **con**-connazionale, **sin**-sintoria **cor**-correlation, **համա**-համահունչ
- Հակադրություն ցույց տվող նախածանցներ՝ **contro**-controsenso, **contra**-contrappeso, **anti**-antifascismo, **anti**-antiwar, **հակա**-հակամետ
- Միջոցի նախածանցներ՝ **trans**-transoceanico, **dia**-diascopia
- Գերադասության նախածանցներ՝ **sopra**-soprannumero, **sovra**-sovraproduzione, **super**-supervisione, **գերա**-գերակշիռ
- Տարածության նախածանցներ՝ **intra**-intrauterino, **entro**-entrobordo, **endo**-endovenoso, **extra**-extracomunitario, **fuori**-fuoriprogramma, **extra**-extraordinary, **oltre**-oltrecortina, **ultra**-ultrasuono, **meta**-metapsichica, **iper**-iperspazio, **sotto**-sottoveste, **sub**-subappalto, **infra**-infrarosso, **ipo**-ipoderma, **sub**-submarine, **ստոր**-ստորերկրյա
- Փոխադարձություն ցույց տվող նախածանցներ՝ **inter**-internazionale, **mezzo**-mezzogiorno, **semi**-seminterrato, **emi**-emiparesi, **inter**-international
- Մերձավորություն ցույց տվող նախածանցներ՝ **para**-parapsicologia **para**-paralegal
- Կրկնակիություն ցույց տվող նախածանցներ՝ **bi(s)**-bilinguismo
- Գնահատում ցույց տվող նախդիրներ՝ **ben(e)**-beneamato, **mal(e)**-maleducato, **eu**-eufemismo, **caco**-cacografia
- Գերադրական աստիճան ցույց տվող նախդիրներ՝ **archi**-archidiocesi, **arci**-arciricco; **extra**-extrafino, **super**-supermercato, **stra**-stracarico, **ultra**-ultrasinistra, **extra**-extravert, **գեր**-գերակշիռ (Sensini, 2012:538)

Բայական ածանցներ

Բայակերտ ածանցները իտալերենում և անգլերենում, ավելանալով բառարմատին, կազմում են բայեր: Դրանք հիմնականում նախածանցներ են ի տարբերություն հայերենի, որտեղ բայական ածանցները մեծամասամբ միջաձանցներն են: Դրանք են՝

Բայական ածանցներ	Prefissi Verbali	Verbal Prefixes
ան-, են-, չ-, ն- սուկածանցները- հագենալ, պարծենալ, փախչել, գտնել ացն-, եցն, ցն- պատճառական ածանցները-բարկացնել, պարեցնել, փախցնել ատ-, ոտ-, տ-, բազմապատկական ածանցները-կտրարել, ցատկոտել, կտրտել վ- կրավորական ածանցը- հագնվել	a-, ad-, ac- aggiungere, adattare, accorrere as- asportare circon- circonvenire contra- contraddire de-, di-, deviare, disperare dis- diseducare e-, es-, emigrare, esportare fra- fraporre im- immettere inter- interporre intra- intravedere mis- misconoscere per- permeare post- postdatare pre- predefinire pro- prospettare re-, ri-, reinventare, riallineare s- sparlare sott-, sotto- sottentare, sottovalutare sur- surgelare tra- traboccare	ac-, ad-, accompany, adjust circum- circumvent col- collaborate contra- contradict de- decrease di-, dif-, dis-, divide, differ, disagree e-, ex-, emit, exclude en-, em-, enamor, empower for-, fore-, foresee im- import inter- interject mis- misinterpret multi- multiply ob-, op-, obtain, oppose over- overwork per- perform post- postpone pre- precede pro- propel re- redo sup- support super- superimpose trans- transform

Բայական ածանցների մեջ տարբերակում ենք երկու խումբ՝

1. Ուժգնացնող նախածանցներ՝ **s-**cancellare-**scancellare**, **stra-**fare-**strafare**, **r(i)-**empire-**riempire**
2. Հայեցակերպի և ձևի
 - 2.1 Կրկնության՝ **r(i)-**scrivere-**riscrivere**, **r(e)-**integrare-**reintegrare**
 - 2.2 Ժխտման՝ **de-**colorare-**decolorare**, **di-, dis-**sperare-**disperare**, **s-**montare-**smontare**
 - 2.3 Հակադրման՝ **contro-**battere-**contro**battere, **contra-**dire-**contraddire**
 - 2.4 Փոխադարձության՝ **inter-**agire-**inter**agire, **in-**mettere-**in**framettere, **fra-**mischiare-**framischiare**

Թվականակերտ ածանցներ

Թվականակերտ ածանցները արմատից կամ բառից թվական են կազմում: Դրանց զործածությունը այնքան էլ մեծ չէ ուսումնասիրվող լեզուներում: Թվականակերտ են հետևյալ ածանցները՝

-ական բաշխական և կոտորական թվականներ՝ մեկական, երկու երրորդական

-(ե)րորդ դասական թվականներ՝ երկրորդ, երրորդ

-սուն քանակական թվականներ՝ երեսուն, քառասուն:

Թվականակերտ նախածանցները իտալերենում և անգլերենում սերում են թե՛ լատիներենից և թե՛ հունարենից:

Թվական	Հունական ծագում	Լատինական ծագում
1	Mono -monarch	Uni -unicycle
2	Di-Duo -duet	Bis-Bi -bicycle
3	Tri -triangle	Ter -triathlon
4	Tetra -tetrahedron	Quadr-Quatt -quadruped
5	Penta -pentagon	Cinqu-Quint -quintuplets
6	Esa -hexagon	Sest -sextuplets
7	Epta -heptagon	Sett-Sept -septuplets
8	Otta-/Otto -octopus	Ott -octuplets
9	Ennea -ennead	Non -nonagenarian
10	Deca -decathlon	Dec -decade
11	Endeca -	
12	Dodeca -	
20	Icosa -	
	Pentaconta -	
50	Ecta -hectare	Cent -century
100	Cillia -kilometer	Mill -millipede
1000	Miria -	
10.000	Poli -	
Molti		Multi -

Մակբայակերտ ածանցներ

Եվ վերջին՝ առավել տարածված դասակարգմամբ, առանձնացնենք մակբայակերտ ածանցները, որոնք արմատից կամ բառից մակբայ են կազմում: Հայերենի առավել գործածական մակբայակերտ ածանցներն են՝

-(ա)բար (աստիճանաբար, հայրաբար, ընտրողաբար),

-(ա)պես (նմանապես, հոգեպես, կանխապես),

- (ա)վարի** (մարդավարի, քաղաքավարի, տնավարի),
- իվ** (խստիվ, լրիվ, մեղմիվ, ճշտիվ),
- ովին** (գլխովին, ազգովին, լիովին, հիմնովին),
- որեն** (մեղմորեն, շեղորեն, գործնականորեն),
- ուստ** (վերուստ, ներքուստ, արտաքուստ):

Ժամանակակից անգլերենում միևնույն ածանցը կարող է օգտագործվել և՛ որպես մակբայակերտ վերջածանց և՛ որպես նախդիր: Միակ տարբերակումն այն է, երբ ածանցը հանդիպում է բայի հետ, ապա գործ ունենք մակբայի հետ, իսկ եթե կապված է գոյականի, դերանվան հետ, ապա նախդիրն է հաջորդում: Առավել հաճախ հանդիպում են բայերին հաջորդող նախդրային կառույցները (phrasal verbs) օրինակ՝ *put on, take off, give away, bring up, call in, brush aside* և այլն (<<https://www.englishgrammar.org/adverb-particles-prepositions/>>):

Նշված օրինակներից հասկանալի է դառնում, որ ածանցները ըստ **ձևիմաստային** հատկանիշների լինում են *հոմանիշ, հականիշ, համանուն* և *բազմիմաստ* (Ջահուկյան, Աղայան, Քոսյան 1980:450):

Հոմանիշ են համարվում իմաստով նույն կամ մոտ, բայց հնչյունական կազմով իրարից տարբեր ածանցները, ինչպիսիք են՝ *sopra-sovra, fra-infra* զույգերը: *Հականիշ* են համարվում իմաստով հակադիր ածանցները, ինչպիսիք են՝ *վերստոր, ան-ստ, fra-sopra* զույգերը:

Համանուն ածանցները միևնույն հնչյունական կազմով, բայց իմաստով տարբեր ածանցներն են: Համանուն ածանցները բազմիմաստ ածականների հետ ունեն որոշակի ընդհանրություններ, քանի որ միևնույն ածանցը կարող է արտահայտել մի քանի իմաստ, օրինակ *disamore-disfunzione*: Առաջին դեպքում գործ ունենք ժխտման, իսկ երկրորդ դեպքում՝ փոփոխության հետ: *Բազմիմաստ* ածանցների իմաստային տարբերակները ծագումնաբանորեն ընդհանուր են, մինչդեռ համանուն ածանցները արտահայտում են միանգամայն տարբեր բառակազմական իմաստներ:

Ձևաբանական հատկանիշից գատ՝ հաջորդ հիմնական դասակարգումը **իմաստային** տեսակների բաշխումն է:

Խոսքիմասային իմաստից բացի հայերենում ածանցները կարող են ունենալ նաև այլ իմաստներ՝

- **-ակ, -իկ, -ուկ** վերջածանցներ՝ փոքրության իմաստ կամ փաղաքշական, մտերմական վերաբերմունք, օրինակ՝ *տնակ, փոքրիկ, գառնուկ*,
- **ան-, դժ-, տ-, չ-, ապ-** նախածանցներ՝ ժխտական իմաստ, օրինակ՝ *անգույն, դժբախտ, տհաճ, չտես, ապուշ*,
- **-ան, -իչ, -ող, -անակ, -արար, -որդ, -վոր, -ոց** վերջածանցներ՝ մի բան անողի, գործորդի կամ գործիքի իմաստ, օրինակ՝ *իշխան, փական, գործիչ, հատիչ, գրող, ընկանակ, լուսարար, վարորդ, զինվոր, էտոց*,
- **-ային, -ական, -յան** վերջածանցներ՝ վերաբերության, սերման իմաստ, օրինակ՝ *քաղաքային, գյուղական, նոյյան*,

- **-ավուն, -եղ, -ի, -(կ) ոտ, -ու, -ուն** վերջածանցներ՝ որևէ հատկությամբ օժտված լինելու իմաստ, օրինակ՝ *դառնավուն, համեղ, աղի, վախկոտ, բրդոտ, ազդու, եռանդուն,*
- **մակ-, ստոր-, հար-, վեր-, անդր-** նախածանցներ՝ տարածական հարաբերություններ, օրինակ՝ *մակընթացություն, ստորերկրյա, հարակից, վերադաս, անդրծովյան,*
- **-անոց, -արան, -ոց, -ստան, -ուտ** վերջածանցներ՝ տեղ, գործողության վայր, օրինակ՝ *ծաղկանոց, լոգարան, դպրոց, մրգաստան, թփուտ,*
- **-անք, -արք, -մունք, -յուն, -ոնք, -ություն, -ում, -ույք, -ունք, -ուստ** վերջածանցներ գործողության անուն, օրինակ՝ *աշխատանք, ստուգարք, մտածմունք, պայթյուն, զարթոնք, զվարճություն, շարժում, հաճույք, երկունք, փախուստ,*
- **-ածո, -ոց, -ված(ք), -ույթ, -ք** վերջածանցներ՝ գործողության հետևանք, օրինակ՝ *հանածո, շրիկոց, փլվածք, շահույթ, վայելք, ծալք,* և այլն: Ժամանակակից իտալերենում նախածանցը հիմնովին փոխում է բառարմատի իմաստը՝ մինևույն ժամանակ պահպանելով հստակ քերականական հարաբերությունը:
- Նախածանցներ **a-** (an-), **in-** (il-, im-, ir-), **dis-** և **s-** տապալում են բառարմատը, քանի որ ունեն բացական նշանակություն. *a-morale-ան-* բարո, *in-capace-ան-* ընդունակ, *dis-attento-ան-* ուշադիր, *s-fiducia-ան-* վստահություն:
- Նախածանցներ **ultra-, iper-, sur-** և **stra-** ընդարձակում են բառարմատի իմաստը, քանի որ ունեն խտության նշանակություն. *ultra-sottile-գեր-* բարակ, *iper-sensibile-գեր-* զգայուն, *sur-gelato-գեր-* սառեցրած, *stra-cotto-գեր-* եփած:
- Նախածանցներ **ipo-** և **sub-** ը մեղմացնում են բառարմատի իմաստը, քանի որ արտահայտում են նորմայից քիչ քանակություն. *ipo-calorico-քիչ* կալորեական, *sub-acqueo-ստոր-* ջրյա:
Անգլերենում ըստ ընդհանուր նշանակության տարբերակվում են հետևյալ ածանցային իմաստային խմբերը՝
- Ժխտական իմաստ արտահայտող նախածանցներ ինչպիսիք են՝ **un-, non-, in-, dis-, a-** արտահայտված հետևյալ օրինակներում՝ **ungrateful, unemployment, non-politician, non-scientific, incorrect, disloyal, disadvantage, amoral, asymmetry...**
Որպես հետևություն պետք է նկատի ունենալ որ **in-** նախածանցը, կախված արմատի առաջին տառից, ենթարկվում է հնչյունափոխության, այլ կերպ ասած նախածանցային ձևույթը ունենում է մի քանի ենթա-ձևույթներ (ալոմորֆներ) ինչպիսիք են օրինակ՝ **il-** ([l]-ից առաջ), **im-** ([p, m]-ից առաջ), **ir-** ([r]-ից առաջ), **in-** մյուս բոլոր դեպքերի համար, օրինակ **illegal, improbable, immaterial, irreligious, inactive,** և այլն:
- Հակադիր կամ պատճառական իմաստ արտահայտող նախածանցներ/reversative or privative prefixes, ինչպիսիք են՝ **un-, de-, dis** արտահայտված հետևյալ օրինակներում՝ **untie, unleash, decentralise, disconnect** և այլն:

- Բացասական իմաստ արտահայտող նախածանցները ինչպիսիք են՝ **mis-, mal-, pseudo-**, արտահայտված հետևյալ օրինակներում՝ **miscalculate, misinform, maltreat, pseudo-classicism, pseudo-scientific** և այլն:
- Ժամանակի իմաստ արտահայտող նախածանցները ինչպիսիք են՝ **fore-, pre-, post-, ex-**, արտահայտված հետևյալ օրինակներում՝ **foretell, foreknowledge, pre-war, post-war, post-classical, ex-president** և այլն:
- Կրկնության իմաստ արտահայտող նախածանցները ինչպիսիք են՝ **re-rebuild, re-write** օրինակներում:
- Տեղի իմաստ արտահայտող նախածանցներ ինչպիսիք են՝ **super-, sub-, inter-, trans,** արտահայտված հետևյալ օրինակներում՝ **super-structure, subway, inter-continental, trans-atlantic,** և այլն:

Իմաստաբանական տեսանկյունից անզլերենում նախածանցները դասակարգվում են՝

- 1) չեզոք իմաստային արժեքով
- 2) արտահայտիչ իմաստային արժեքով

Այստեղից կարելի է ենթադրել, որ **un-, un-, out-, over-, re-, under-**նախածանցները իմաստով չեզոք են, օրինակ՝ **unnatural, unknown, unlace, outnumber, oversee, resell, underestimate,** և այլ բառերում: Մյուս կողմից ակնհայտ է հետևյալ ածանցների գրական-գրքային իմաստային հատկանիշները **pseudo-, super-, ultra-, uni-, bi-** հետևյալ օրինակներում՝ **pseudo-classical, superstructure, ultra-violet, unilateral, bifocal,** և այլն: Հաճախ հանդիպում ենք նախածանցների խմբերի, որոնցից մեկն իմաստով չեզոք է, մյուսը՝ ընդգծված արտահայտչականությամբ: Հետևյալ օրինակը կհաստատի այս մտեցումը՝ **over-** նախածանցը հանդիպում է բոլոր գործառական ոճերում, մինչդեռ **super-**ը հատուկ է գրական ոճին: Բառակազմական տեսանկյունից նախածանցները բաժանվում են երկու խմբի՝ կենսունակ/գործուն/ակտիվ և ոչ կենսունակ/ոչ գործուն/պասիվ: Կենսունակ են այն ածանցները, որոնք մեծ մասնակցություն ունեն ածանցմանը և նոր բառերի ստեղծմանը: Քննարկվող լեզուներում ածանցների գերակշիռ մասը՝ նախածանցները, միջածանցներն ու վերջածանցները, կենսունակ են՝ օրինակ՝

-ան, -գեր, -հակ, -համ, -ություն, -ուիի, de-, dis-, un-, ex-, in, -tras, -inter, -mis, -per...

Անկենսունակ են այն ածանցները, որոնք լեզվի զարգացման փուլում չեն մասնակցում կամ հազվադեպ են մասնակցում նոր բառերի կերտմանը: Անկենսունակ ածանցներն են՝ **-դժ, -աջ, -ունի, -եք, -յա, -able, -er.** (<https://studfiles.net/preview/3011399/page/61/>)

Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին՝

- Ածանցները բառակազմական մեծ դեր են կատարում և արմատների, ձևույթների հետ միանալով՝ կազմում նոր բառեր: Ընդ որում դրանք ոչ միայն գոյականի, ածականի, բայի, այլև մակբայի, թվական հետ են գործածվում՝ կազմելով տարբեր խոսքիմասային նշանակություն արտայայտող բառեր:
Ինչ իմաստներ էլ որ հաղորդեն հիմնական ձևույթներին կամ բառերին, դրանք բառակազմական ածանցներ են և արժևորվում են հենց նրանով, որ նոր բառեր են կերտում:
- Բոլոր նախածանցներն ունեն խոսքիմասային իմաստ և այդ տեսանկյունից իրար հոմանիշներ են՝ գոյականակերտ, ածականակերտ, (մակ) բայակերտ, թվականակերտ ածանցները՝ միմյանց նկատմամբ իմաստային փոփոխության չեն ենթարկվում:
- Ձևիմաստային հատկանիշից գատ՝ ածանցները ենթարկվում են նաև իմաստային զարգացման. Հնարավոր է, որ միևնույն ածանցը երկու տարբեր ածանցումների մեջ միանգամայն տարբեր ածանցական իմաստներ ունենան և, ընդհակառակը, հնարավոր է, որ երկու տարբեր ածանցներ միևնույն իմաստն արտահայտեն:
- Իմաստառձաբանական հատկանիշից կախված՝ հանդիպում ենք հոմանիշ նախածանցների խմբերի, որոնցից մեկը իմաստով չեզոք է և գործածելի է բոլոր գործառական ոճերում, իսկ մյուսը՝ արտահայտիչ է և հատուկ միայն տվյալ ոճին:
- Ածանցները, որպես ամբողջական համակարգ, տարբերվում են իրարից ոչ միայն արտաքին՝ հնչունական, այլև ներքին՝ բովանդակային, ինչպես նաև իմաստագործառական հատկանիշներով: Դրանք, ըստ բառակազմական նշանակության, բաժանվում են կենսունակ և անկենսունակ նախածանցների, որոնք, լեզվական փոփոխություններով պայմանավորված, փոխում են նաև իրենց գործունեության ոլորտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, Մ. (1965) *Հայոց լեզվի տեսություն*. Երևան: «Միտք» հրատարակչություն:
2. Աղայան, Է. (1984) *Ընդհանուր և հայկական բառագիտություն*. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
3. Աճառյան, Հ. (1971, 1973, 1977, 1979) *Հայերեն արմատական բառարան*, հհ 1-4. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
4. Եզեկյան, Լ. (2005) *Հայոց լեզու*. Երևան: ԵՊՀ հրատարակչություն:
5. Զահուկյան, Գ.; Աղայան, Է.; Քոսյան, Վ. (1980) *Հայոց Լեզու*, I մաս, Ա պրակ. Երևան: «Լույս» հրատարակչություն:
6. (2003) *Garanzanti il Grande dizionario delle lingua italiana, Rotolito Lombardia di Pioltello*, Milano.
7. Ginzburg, R.S. (1979) *A Course in Modern Lexicology*, M.: Vyshaya shkola.

8. Dardano, M; Trifone, P. (1997) *La Nuova Gramattica Della Lingua Italiana*, Bologna: Zanichelli.
9. Fogliato, S. e Carla, T.M. (1996) *Italiano: l'uso e la grammatica*. Bologna: Loescher,
10. Moretti, G.B. (1996) *L'Italiano come prima o seconda lingua*. Perugia: Guerra Edizioni.
11. Sensini, M. (2012) *Le Parole e i Testi*, Milano: Mondadori Scuola.

Морфологическая и семантическая классификация префиксов в современном итальянском, английском и армянском языках

В данной статье представлен сравнительный анализ приставочных систем в современном итальянском, армянском и английском языках, опираясь на морфологические, семантические и словообразовательные определения. В частности, проводится исследование в рамках морфосмысловых типологии и сравнительного анализа. В контексте данных теорий учитываются (имеются в виду) особенности трёх языков.

Morphological and Semantic Classification of Prefixes in Modern Italian, English and Armenian

The present paper deals with the typological analysis of prefixal system in modern Italian, Armenian and English on the basis of morphological, semantic and word-formation characteristics. The examination is carried out within the scopes of morphological typology and contrastive analysis. Within the context of the mentioned theories prefixal peculiarities of those languages are revealed.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrtyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrtyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru